**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2**
**Աբովյան համայնքի կարիքների համար գնդաձև ակացիաներ ձեռք բերելու նպատակով «ԱԲՀ-ԳՀԱՊՁԲ-22/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Աբովյան

29/03/2022 թ.
ժամը 15:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Չոբանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ջ. Սարգսյան Լ. Իսահակյան, Գ. Խաչատրյան, Ս. Չիտչյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Ջոհրաբյան

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԳՀԱՊՁԲ-22/08» ծածկագրով գնանշման հարցումով գնման ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

**1. «ԱԲՀ-ԳՀԱՊՁԲ-22/08» ծածկագրով գնանշման հարցումով ընթացակարգի մասին**
**(Ա. Չոբանյան)**

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով 2022 թվականի մարտի 29-ին, ժամը 15:00-ին:

1.2 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

1.3 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:
Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

**2. «ԱԲՀ-ԳՀԱՊՁԲ-22/08» ծածկագրով գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**
**(Ա. Չոբանյան)**

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Անվանումը |
|---|---|
| 1 | «Կուշչի» ՍՊԸ |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

## 3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

**(Ա. Չոբանյան)**

Ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Նախահաշվային գին |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| **Աբովյան համայնքի կարիքների համար գնդաձև ակացիաների ձեռքբերում** | | | | | |
| 1 | «Կուշչի» ՍՊԸ | 4 760 000 | – | 4 760 000 | 5 000 000 |

*3.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

*Առաջարկված գինը մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

## 4. Տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

**(Ա. Չոբանյան)**

4.1 «Կուշչի» ՍՊԸ կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հավելված 1.3-ի՝ մասնակցի կողմից ներկայացրած 3.5 կետում կատարված չէ համապատասխան նշումը:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումներրի գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի որոշեց՝ ««Կուշչի» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ համաձայն հրավերի 2.4 կետի: Բացակայող փաստաթղթերը ներկայացնելու դեպքում կգնահատվի նաև մասնակցի ոչ գնային պայմանների չափանիշները՝ հակառակ դեպքում ոչ գնային պայմանները կգնահատվի զրո և կհանդիսանա հայտի մերժման հիմք:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

**5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին**

---

(Ա. Չոբանյան)

Հաշվի առնելով այն, որ գնման ընթացակարգը կազմակերպված է «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 01.04.2022թ. ժամը 11:00-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Ա. Չոբանյան |
| Անդամներ՝ | | Ջ. Սարգսյան |
| | | Լ. Իսահակյան |
| | | Գ. Խաչատրյան |
| | | Ս. Չիտչյան |
| Համակարգող | | Տ. Ջոհրաբյան |